

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ  
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

«08» ՄԱՅԻՍԻ 2024Թ.

N 173-Լ

Հ Ր Ա Մ Ա Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի  
2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 4-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ  
հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 17-րդ  
հոդվածի «է» կետով, ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1933-Ն  
որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն»  
ՊՈԱԿ-ի կանոնադրության 28-րդ կետի «գ» և 29-րդ կետի «գ» ենթակետերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի  
ժամանակավոր պաշտոնակատարի 2021 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի  
Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կառուցվածքը և  
հաստիքացուցակը հաստատելու և 10.06.2020թ.-ի թիվ 88-Լ հրամանն ուժը կորցրած  
ճանաչելու մասին» թիվ 4-Լ հրամանի (այսուհետ՝ Հրաման) 1-ին կետով հաստատված  
հավելված 1-ում կատարել հետևյալ փոփոխությունը.

ա) աղյուսակի «Ստորաբաժանում» սյունակում «Շինարարատեխնիկական և  
ճարտարագիտատեխնիկական փորձաքննությունների բաժին» մասից հանել 1 տող  
հետևյալ բովանդակությամբ.

պաշտոն՝ «Փորձագետ», քանակը՝ «1», աշխատավարձ՝ «450.240», գործակից՝ «0.56»  
բառերը և թվերը,

բ) աղյուսակի «Ստորաբաժանում» սյունակում «Շինարարատեխնիկական և  
ճարտարագիտատեխնիկական փորձաքննությունների բաժին» մասում լրացնել 1 տող  
հետևյալ բովանդակությամբ.

պաշտոն՝ «Ավագ փորձագետ», քանակը՝ «1», աշխատավարձ՝ «506,520», գործակից՝  
«0.63» բառերով և թվերով,

2. «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի հանրային  
կապերի պատասխանատու Արփինե Ադամյանին 1 աշխատանքային օրվա ընթացքում

ապահովել սույն հրամանի հրապարակումը կազմակերպության պաշտոնական  
ինտերնետային կայքէջում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

X

---

ՏՆՕՐԵՆ՝

Դ. ՂՈՒԼՅԱՆ